Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-583-20.04.2020,25.05.2020-ՏՀ-011/1) ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	Աժ պատգամավոր Արթուր Դավթյան	Հոդված 1	«Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքում նախատեսել իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու համար օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանցի, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվելու պայման:	Ընդունվել է մասնակի	Ընդունվել է մասնակի
2.	Աժ պատգամավոր Միքայել Մելքումյան	Հոդված 1	1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 1. «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի 3-րդ հոդվածի՝ • 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ. «1) հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե իրավաբանական անձը թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեք հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, իսկ ֆիզիկական անձը թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն	Ընդունվել է մասնակի	Ընդունվել է մասնակի

			աշխատավարձի երկու հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝»: • 1-ին կետի «դ» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ. «դ) պահանջի չվիճարկվող մասը իրավաբանական անձանց դեպքում գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեք հազարապատիկը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ երկու հազարապատիկը.»:»:		
3.	Աժ պատգամավոր Միքայել Մելքումյան ՀՀ Կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 1.** «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասում՝ 1) 1-ին կետում «հազարապատիկը» բառը փոխարինել «երկուհազարապատիկը» բառով, իսկ «60-օրյա» բառը փոխարինել «90-օրյա» բառով. 2) 1-ին կետի «դ» ենթակետում «հազարապատիկը» բառը փոխարինել «երկուհազարապատիկը» բառով. 3) 2-րդ կետում «հազարապատիկը» բառը փոխարինել «երկուհազարապատիկը» բառով:»:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Աժ պատգամավոր Միքայել Մելքումյան ՀՀ Կառավարություն		Նախագիծը լրացնել նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «հազարապատիկը» բառը փոխարինել «երկուհազարապատիկը» բառով, իսկ «60-	Ընդունվել է	Ընդունվել է

			օրյա» բառը փոխարինել «90-օրյա» բառով:»:		
5.	Աժ պատգամավոր Միքայել Մելքումյան ՀՀ Կառավարություն		Նախագիծը լրացնել նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 3.** Օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ մասում «հազարապատիկը» բառը փոխարինել «երկու հազարապատիկը» բառով, իսկ «60» թիվը փոխարինել «90» թվով:»:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Աժ պատգամավոր Միքայել Մելքումյան ՀՀ Կառավարություն		Նախագիծը լրացնել նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 4.** Օրենքի 89-րդ հոդվածում «հազարապատիկը» բառը փոխարինել «երկու հազարապատիկը» բառով, իսկ «60» թիվը փոխարինել «90» թվով:»:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	Աժ պատգամավոր Միքայել Մելքումյան ՀՀ Կառավարություն	Հոդված 2	2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 5. Եզրափակիչ և անցումային դրույթներ** 1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2.Սույն օրենքի դրույթները տարածվում են միայն այն սնանկության դիմումների նկատմամբ, որոնք ներկայացվել են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, և մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված դիմումները քննվում և սնանկ ճանաչելու հարցը լուծվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի դրույթներին համապատասխան:»:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Աժ պատգամավոր Միքայել Մելքումյան ՀՀ Կառավարություն		Նախագծին ավելացնել նոր՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ:	Ընդունվել է	Ընդունվել է